

ԿՐՕՆԱԿԱՆ

«Յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Հրեշտակներու մարդկութեան տուած Ծննդեան պատգամը դժբախտաբար տակաւին կը յամենայ մարմնանալ այս երկրին վրայ: Օրինական, կրօնական, ազգայնական եւ հատուածական մտահոգիչ անհասկացողութիւններ կը շարունակեն մթագնել ժողովուրդներու կեանքը, մարդոց՝ որոնք այնքան կարիքը ունին համերաշխութեան եւ մանաւանդ փոխադարձ հասկացողութեան: Եթէ միայն մարդկութիւնը գիտնար իր վատնած ֆիզիկական, նիւթական եւ բարոյական ոյժերը կիրարկել դրական նպատակներով, մեր այս աշխարհը անկասկած կրնար դառնալ իրա՛ւ դրախտ մը, ուր մարդ արարածը ի վիճակի պիտի ըլլար մարդկօրէն եւ սրտացաւ կերպով լուծել իր առջեւ դրուած բոլոր հարցերն ու դժուարութիւնները: Ժամանակը հասած է, եւ մարդ արարածը կը գտնուի լուրջ հրամայականին առաջ իր անձնական եւ կամ ազգային շահերէն աւելի նախապատուութիւնը տալ մարդկայինին, հաւաքականին շահերուն:

Այս օրերուն, երբ երկրագունդը կ'անցնի հսկայական եւ արագ փոփոխութիւններու շրջանէ մը, որ տակաւին մարդկային պատմութիւնը երբեւիցէ արձանագրած ըլլայ, աշխարհի եւ մանաւանդ Միջին Արեւելքի երկիրներու ղեկավարները պարտին ներդաշնակել իրենց գաղափարներն ու գործունէութիւնը, որպէսզի ըստ այնմ կարենան պատրաստուիլ դիմագրաւելու ապագան:

Հայութիւնը, մեր Մայր Հայաստանն ու մեր Սրբոց Յակոբեանց վանքն ու Միաբանութիւն եւս պարտինք ներդաշնակել մեր դիրքն ու գործերը և արարքները համաձայն մեր չափին ու դիրքին, կարենալ ըստ այնմ դիմագրաւելու ապագան: Անցեալը այլեւս չպատկանիր մեզի, ունինք միայն այսօրն ու վաղը: Գաղափարներ՝ անհրաժեշտ են, սակայն գործը միշտ նախընտրելի է եւ հրամայական: Ներկայ ժամանակները թոյլ չեն տար այլեւս, որ մարդ օրօրուի ու տարուի վսեմ գաղափարներէ եւ զգացումներէ, մանաւանդ երբ ի վիճակի չենք զանոնք գործի վերածելէ, որովհետեւ հաստատութիւնները, ինչպէս նաև անհատներ, կը յաջողին գործերով միայն եւ ոչ թէ գաղափարներ ու տեսակէտներ որոճալով:

Ամանորի մեր մաղթանքն է, որ մեր Ազգի բեկորներն ու Միաբանութեան անդամները մաքրեն իրենց միտքն ու հոգին անցեալի ժանգէն և թօթափեն անոնց ժամանակի փոշիները: Որովհետեւ մեր ֆիզիքական ու բարոյական գոյութիւնը ամէն ժամանակներէ աւելի ենթակայ է լուրջ վտանգի, եւ ոչ մէկ իրաւունք ունինք մենք մեզ յանձնելու Բիւզանդական հին եւ ճղճիմ հաշիւներու: Արդի աշխարհն ու մանաւանդ մենք՝ հայերս, ամէն ժամանակէ աւելի կարիքը ունինք ի գին ամէն բանի ամփոփուելու եւ զգաստանալու:

Եթէ բացուող Ամանորը ինքզինք նորոգող ժամանակն է, իսկ միւս կողմէն՝ մեր Փրկչին Ծննդեան տօնը, որ եկաւ յեղաշրջելու մարդկային ճակատագիրը կեանքի ըմբռնումը նորոգողն է, որովհետեւ Ծնունդը սրտառուչ դրուագ մը ըլլալէ աւելի մարդկային կեանքի նոր գիրքի սկիզբն է, ուր Մարդուն պատմութիւնը կու գար խառնուիլ Աստուածայինին եւ փոխադարձաբար, եւ այդ Աստուածայայտնութեան միջոցաւ Մարդու կեանքը կը ստանար նո՛ր իմաստ, որ իր կարգին պիտի գար լեցնելու երկնքի եւ երկրի միջեւ եղող բացը:

Ի՞նչ էր մարդը նախքան Քրիստոնէութիւնը, եթէ ոչ մասնիկ մը բնութեան, գերի

գձուձ ու ստորին ոյժերու: Աստուածորդին եկաւ ու ազատագրեց մարդը այդ ոյժերէն տեղ յատկացնելով անոր հոգեկան կարգին մէջ եւ այսպէս միացնելու մարդկային ճակատագիրը Աստուածայինին: Յետոյ, ի՞նչ է Քրիստոսի Ծննդեան բուն իմաստը, եթէ ոչ գերագոյն կապը Աստուծոյ հայրութեան եւ մարդուն որդիութեան մէջ: Վերջապէս, մեր Փրկչին Ծնունդը, տօնն է մարդուն՝ Աստուծոյ հանդիպման, Անառակ Որդւոյն իր հօրը տուն դարձի: Ճիշտ է որ Ան 2019 տարին եր առաջ օր մը ծնաւ, բայց տակաւին կրնայ ամէն օր ծնիլ մեր սիրտերուն մէջ եթէ բանանք զանոնք իր լոյսին, որ գերագոյն սէրն է: Անկասկած Քրիստոսի Ծնունդը իրաւ «Խորհուրդ մեծ և Սքանչելի» է:

Ն.Ա.Մ.

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍՔ

Օտար երկրի մէջ հանդիպած հին բարեկամը կը նմանի երաշտէն ետք տեղացող անձրեւին:

Մարդիկ շահագործողը ինք եւս իր կարգին կը շահագործուի:

Վիրաւորանքները մոռցէ՛ք, բայց բարիքը՝ երբեք:

Հարցում մը հարցնողը ապուշ կը նկատուի հինգ վայրկեան, սակայն բնաւ չհարցնողը ապուշ կը մնայ յաւիտեան:

Իրա՛ւ ազնուականը միշտ համեստ է:

Մարդը կը ճանչցուի իր բարեկամ շրջանակէն:

Մարդուն իմաստութիւնը կամ ապուշութիւնը կը հասկցուի իր առաջին իսկ բառերէն:

Բարութիւնը բարիք կը բերէ:

Սիրող սիրտը միշտ երիտասարդ կը մնայ:

Հերոսութիւնը վայրկեան մը աւելի տոկալու մէջ կը կայանայ:

Կորսուածէն աւելի հաշուէ՛ թէ ի՞նչ մնացած է: